ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » նոյեմբերի 2021թ. № 391

2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՈՒԵՐԼԻՖՏԻՆԳԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՈՒԵՐԼԻՖՏԻՆԳԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի զեկուցագիրը, 2021 թվականի Պաուերլիֆտինգի աշխարհի առաջնությունում առաջին պատվավոր տեղը զբաղեցրած Արմեն Անդրանիկի Նիկողոսյանին, Լևիկ Արտակի Հակոբյանին, մարզիչ Գոռ Էդիկի Բարսեղյանին և Հայաստանի Հանրապետության Պաուերլիֆտինգի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Վաչիկի Սարոյանին խրախուսելու նպատակով շնորհակալագրեր և հուշանվերներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սպորտային միջոցառումներ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 27 900 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2021թ. № 392

«ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ, 58-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Շիրակի խճուղու վրա գտնվող 0,302 հա մակերեսով 06-006-0431-0024 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ին, սակայն հողամասի և դրա վրա գտնվող շինությունների «ք.Սպիտակ, Չերյոմուշկա թաղամաս, ԱԳԼՃԿ» հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2482577 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060063ITMAUZ) և «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Գերասիմի Աջամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակի խճուղու վրա գտնվող 0,302 հա մակերեսով, 06-006-0431-0024 կադաստրային ծածկագրով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների «ք.Սպիտակ, Չերյոմուշկա թաղամաս, ԱԳԼՃԿ» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 156» հասցեով (փոստային դասիչը՝ 1802):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » նոյեմբերի 2021թ. № 393

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 288 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմեն Աշոտի Օհանյանի դիմումը՝ որոշում եմ.

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 15-ի «Արմեն Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 288 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» նոյեմբերի 2021թ. № 394

ԷՄՄԱ ՀՐԱՉԻԿԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ ըստ կտակի ժառանգության իրավունքի 2012 թվականի հունիսի 6-ի վկայագրով Էմմա Հրաչիկի Թումանյանին փոխանցված՝ Սպիտակ համայնքի Հարավ-Արևմտյան թաղամասում գտնվող 06-006-0194-0021 կադաստրային ծածկագրով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան «ք.Սպիտակ, Հարավ-Արևմտյան թաղամաս, թիվ 23ա» հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեն փոփոխելու հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006BXTDVQ9) և Էմմա Հրաչիկի Թումանյանի ներկայացուցիչ Էլեոնորա Աշոտի Հասան-Ջալալովայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էմմա Հրաչիկի Թումանյանին ըստ կտակի ժառանգության իրավունքի 2012 թվականի հունիսի 6-ի վկայագրով փոխանցված՝ Սպիտակ համայնքի Հարավ-Արևմտյան թաղամասում գտնվող 0,041 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան «ք.Սպիտակ, Հարավ-Արևմտյան թաղամաս, թիվ 23ա» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Հարավ-Արևմտյան թաղամաս, թիվ 23/1» հասցեով (փոստային դասիչը՝ 1805):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբեր 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2021թ. № 395

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 8 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 260 000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» նոյեմբերի 2021թ. № 396

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի հունվարի 25-ի թիվ 8 որոշմանը կից ցուցակում Գրիշա Անուբախի Ջուլհակյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Անուբաղի», հիմք ընդունելով Գրիշա Անուբախի Ջուլհակյանի նույնականացման քարտը և Գրիշա Անուբախի Ջուլհակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի հունվարի 25-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Այգեստան, Պանրագործների փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 8 որոշմանը կից ցուցակի 36-րդ տողում նշված «Անուբաղի» բառը փոխարինել «Անուբախի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 16
ք. Սպիտակ